IHSS
IN-HOME SUPPORTIVE SERVICES
ELECTRONIC SERVICES PORTAL



# Էլեկտրոնային Այցի Հաստատում (EVV) Էլեկտրոնային Ծառայությունների Համակարգ (ESP)

## Մատակարարի/Ստացողի Գրամցում

www.etimesheets.ihss.ca.gov



Լրացուցիչ օգնության համար խնդրում ենք դիմեք IHSS-ի Ծառայության Բաժին՝ (866) 376-7066 հեռախոսահամարով, Երկուշաբթիից – Ուրբաթ, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 5-ը: Ընտրեք Էլեկտրոնային Ծառայությունների Համակարգի (Պորտալի) տարբերակը՝ ESP Ծառայության Բաժնի ներկայացուցչի հետ խոսելու համար:

## ԳՐԱՆՑՎԵԼ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

Եթե Դուք այս կայքէջն օգտագործում եք առաջին անգամ, ապա Դուք պետք է գրանցվեք հաշիվ ունենալու համար:

**Ձեզ հարկավոր են հետևյալ տեղեկությունները գրանցման համար.**

- Ձեր անունը
- 9-նիշանոց մատակարարի համարը (**եթե մատակարար եք**), կամ 7-նիշանոց գործի համարը (**եթե ստացող եք**)
- Ծննդյան ամսաթիվը
- Ձեր սոցիալական ապահովության համարի վերջին չորս թվերը
- Գործող էլ. փոստի հասցե

**Նշում.** Թեև խորհուրդ չի տրվում, սակայն Դուք կարող եք օգտագործել նույն էլ.փոստի հասցեն գրանցվելու համար, որպես մատակարար և ստացող:

Էլեկտրոնային Ծառայությունների Համակարգ մուտք գործելու համար այցելեք այստեղ՝ www.etimesheets.ihss.ca.gov

## Գրանցման գործընթացի համար պետք է կատարել 5 քայլեր

**Այդ հինգ գործողությունները պետք է կատարեք միայն մեկ անգամ, դրանից հետո հարկավոր է միայն մուտք գործել.**




**Նշում.** Յուրաքանչյուր քայլը ցույց կտա նարնջագույն, նշելու այն քայլը, որի վրա Դուք գտնվում, այնուհետև այն կփոխվի կանաչի ՝ ավարտված քայլը ցույց տալու համար:

Ձեր էկրանի ներքևում Դուք կտեսնեք բացվող ցանկ՝ լեզուների ընտրության հնարավորությամբ: Դուք կարող եք ընտրել Ձեր նախընտրելի լեզուն՝ սեղմելով բացվող ցանկը: Էլեկտրոնային Ծառայությունների Կայքէջը հասանելի է Անգլերեն, Իսպաներեն, Չինարեն և Հայերեն լեզուներով:




Եթե հարցեր ունեք նախքան սկսելը, ապա «Գրանցվեք այստեղ» հղման ներքևում կսեսնեք “Հաճախակի Տրվող Հարցեր Գրանցման Վերաբերյալ” հղումը: Այդ հղումով կարող եք բացել մի փաստաթուղթ, որը Ձեզ տեղեկատվություն կտրամադրի, թե ինչ տվյալներ են Ձեզ հարկավոր գրանցման գործընթացն ավարտելու համար:

Սեղմեք **Գրանցվեք այստեղ** հղումը՝ գրանցման գործընթացը սկսելու համար:




**Գրանցվեք այստեղ** հղումը ընտրելուց հետո, Դուք կտեղափոխվեք **Բարի գալուստ** էկրանի վրա:



Էկրանի վերևում, Դուք կտեսնեք ծանուցում, որը կտեղեկացնի Ձեզ, թե ով իրավունք ունի օգտվելու այս կայքէջից ։

- Սկսելու համար, ընտրեք “Ստացող” եթե ստացող եք, կամ “Մատակարար”՝ եթե մատակարար եք: Ձեր ընտրությունը կատարելուց հետո՝ սեղմեք **Սկսել Գրանցման Գործընթացը** կոճակը:

Դուք կտեղափոխվեք ‘Գրանցվել’ Էկրանին: Ձեր Էկրանի վերևում Դուք կտեսնեք գրանցման առաջընթացի սանդղակը:

Այն Ձեզ ցույց կտա Ձեր հաշվին գրանցելու հինգ պարզ քայլեր կատարելու առաջընթացը: Դուք կիմանաք, թե որ քայլի վրա եք տվյալ պահին աշխատում, քանի որ այն կգունավորվի նարնջագույնով Ձեր առաջընթացի սանդղակում։




Ձեր առաջին քայլը, **Քայլ 1,** կլինի Ձեր՝ որպես օգտվողի, տվյալների մուտքագրումը:

Այն կտեղեկացնի մեզ Ձեր մասին, և թույլ կտա որպեսզի համակարգը Ձեր տվյալները ստուգի IHSS կամ WPCS Ծառայությունների ծրագրերում:

Դուք պետք է մուտքագրեք հետևյալ տեղեկությունները, Ձեր ՝

- Անունը

- Ազգանունը
- Ծննդյան ամսաթիվը
- Եթե Դուք մատակարար եք, ապա Ձեզ անհրաժեշտ կլինի մուտքագրել Ձեր Մատակարարի համարը: Այն պետք է բաղկացած լինի 9-նիշից և կարող է լինել Ձեր Մատակարարի ցանկացած փաստաթղթում, ինչպես օրինակ նախորդ վճարման թերթիկի վրա:

  Կամ եթե Դուք Ստացող եք, ապա մուտքագրեք Ձեր Գործի համարը՝ այն պետք է լինի 7 նիշանոց թիվ և Դուք կարող եք Գործի համարը գտնել Ձեր ստացած ծանուցագրերի վրա:
- Ձեր Սոցիալական Ապահովության Համարի վերջին չորս նիշերը:

Եթե Դուք մուտքագրել եք Ձեր տվյալները և հաղորդագրություն եք ստացել, որը Ձեզ տեղեկացնում է, որ մուտքագրված տվյալները չեն համապատասխանում մեր գրառումներին, ապա խնդրում ենք դիմել Ձեր Վարչաշրջանի IHSS կամ IHO գրասենյակին:

**Նշում.** Խնդրում ենք նկատի ունենալ, որ Ձեր անձնական տվյալները չեն պահպանվում այս կայքէջում, այլ միայն օգտագործվում են Տնային Աջակցության Ծառայության կամ Այլընտրանքային Անձնական Խնամքի համակարգերում գրանցված տվյալները ստուգելու համար::

Երբ ավարտեք 1-ին Քայլը, խնդրում ենք ընտրել **Հաջորդ** կոճակը:

Դուք կիմանաք, որ ավարտել եք քայլը, քանի որ առաջընթացի սանդղակի գույնը կփոխի նարնջագույնից կանաչի:

**2-րդ Քայլի** համար, Դուք պետք է մուտքագրեք հետևյալ տեղեկատվությունը Ձեր նոր հաշվի համար՝




- Ստեղծեք Ձեր Օգտանունը.
    - Ձեր Օգտանունը զգայուն է տառերի/թվերի ընտրության մեջ, այն կարող է լինել ցանկացած բան՝ ըստ Ձեր ցանկության, սակայն բաղկացած լինի առնվազն 6 նիշից, դրանք կարող են լինել թվեր, տառեր կամ նշաններ:
    - Համոզված եղեք, որ Դուք այն կհիշեք, այն Ձեզ անհրաժեշտ կլինի Ձեր գրանցումն ավարտելու և Ձեր հաշվին մուտք գործելու համար:
- Այնուհետև ստեղծեք գաղտնաբառ.
    - Ձեր գաղտնաբառը զգայուն է տառերի/թվերի ընտրության մեջ և պետք է բաղկացած լինի առնվազն 8 նիշից, և պետք է ներառի տառերի և թվերի համադրույթուն, առնվազն երկու թիվ և չի կարող պարունակել հատուկ նշան: Ձեր գաղտնաբառը պետք է գաղտնի պահեք և չհայտնեք այլ մարդկանց:
    - Կրկին այն պետք է լինի Ձեզ համար հեշտ հիշելի, քանի որ այն Ձեզ անհրաժեշտ կլինի Ձեր գրանցումն ավարտելու և Ձեր հաշվին մուտք գործելու համար:
- Հաստատեք Ձեր Գաղտնաբառը
    - Նորից մուտքագրեք միևնույն գաղտնաբառը
- Այնուհետև մուտքագրեք Ձեր էլ. փոստի հասցեն

    - Մուտքագրեք գործող էլ.փոստի հասցե, քանի որ այն կօգտագործվի Ձեր հաշվի վերաբերյալ ծանուցումներ ուղարկելու համար:

- Խորհուրդ է տրվում, որ մատակարարն օգտագործի նույն էլեկտրոնային փոստի հասցեն միայն այն դեպքում, եթե նա լիազորված է ժամացուցակը ստորագրելու համար կամ՝ որպես անչափահաս ստացողի ծնող օրինական իրավունք ունի այն ստորագրելու:
- Հաստատեք Ձեր էլ.փոստի հասցեն
    - Նորից մուտքագրեք միևնույն էլ,փոստի հասցեն

2-րդ Քայլն ավարտելուց հետո, ընտրեք **Հաջորդ** կոճակը:

**3-րդ Քայլի համար,** Ձեզ անհրաժեշտ կլինի պատասխանել որոշ **Անվտանգության Հարցերին**:

Դուք կընտրեք երեք տաբեր անվտանգության հարցեր բացվող ցանկից : Սեղմեք աջ կողմում գտնվող սլաքը, որպեսզի տեսնեք այն հարցերը, որոնցից կարող եք ընտրություն կատարել:

- Կարևոր է, որ Ձեր ընտրած հարցերի պատասխանները դժվար գուշակելի լինեն ուրիշների համար , սակայն Դուք դրանք հեշտ հիշեք: Դուք կօգտագործեք այս հարցերը, Ձեր գրանցումն ավարտելու համար, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Ձեր գաղտնաբառը վերականգնելու համար:
- Եթե ընտրել և պատասխանել եք բոլոր երեք հարցերին, ապա ընտրեք **Հաջորդ** կոճակը, 3-րդ Քայլն ավարտելու համար:




<u>Ձեր Առաջընթացի սանդղակում կտեսնեք, որ Դուք արդեն **4-րդ Քայլում** եք</u>

- Դուք էլ. նամակ կստանաք Ձեր կողմից տրամադրված գործող էլ. փոստի հասցեին: Ձեզ անհրաժեշտ կլինի հաստատել Ձեր էլ. փոստի հասցեն:
- Մուտք գործեք Ձեր էլ. փոստը և ստուգեք IHSS-ի կողմից ստացված հաղորդագրությունը:

**Նշում.** Եթե Ձեր փոստարկղում հաղորդագրություն չեք տեսնում, ապա ստուգեք Ձեր սպամի թղթապանակը էլ.նամակի համար:




Ահա մի օրինակ, թե ինչպիսի տեսք պետք է ունենա Ձեր էլ. նամակի հաղորդագրությունը:

IHSS

---

Շնորհակալություն IHSS Electronic Services Portal (ESP)- ում գրանցվելու համար՝ հետևյալ օգտագործման անունով Testerfour01. Ձեր հաշվի ստեղծումն ավարտելու համար՝ խնդրում ենք սեղմել ներքևի հղումը և մուտք գործել ծրագիր:

Հաստատել էլ.հասցեն և մուտքագրվել Այս հղումի ժամանակը կսպառվի 05/10/2019 11:52 -ից հետո: Եթե հղման ժամկետը սպառվել է, Դուք պետք է գրանցման գործընթացը կրկին լրացնեք:

**Խնդրում ենք չպատասխանել այս էլեկտրոնային նամակին:** Այս էլեկտրոնային նամակի կամ IHSS/WPCS էլեկտրոնային ժամացուցակի վերաբերյալ հարցերի դեպքում կարող եք զանգահարել Էլեկտրոնային ժամացուցակի Տեղեկատվության Բաժին աշխատանքային ժամերի ընթացքում՝ 1-866-376-7066 հեռախոսահամարով (ընտրեք տարբերակ 4՝ էլեկտրոնային ժամացուցակի աջակցության համար):

Մեզ համար կարևոր է գաղտնի պահել Ձեր տվյալները: Խնդրում ենք վերանայել մեր Գաղտնիության Քաղաքականությունը այստեղ:

Երբ Դուք ստացել եք նամակը, ապա Ձեզանից կպահանջվի հաստատել Ձեր էլ. փոստի հասցեն: Դա անելու համար, հետևեք էլ. նամակում նշված քայլերին՝ սեղմելով **Հաստատել էլ. հասցեն և մուտքագրվել** հղումը:

**Նշում.** Կարևոր է անմիջապես ստուգել Ձեր էլ. փոստի հասցեն, քանի որ էլ.փոստի մուտքագրման հղումը հասանելի է միայն սահմանափակ ժամանակով:

Շնորհավորում ենք: Դուք ավարտել եք Ձեր գրանցման բոլոր հինգ քայլերը, այժմ Դուք գրանցված եք և ունեք հաշիվ Էլեկտրոնային Ծառայությունների Համակարգի Կայքէջում:

Խնդրում ենք հիշել, որ Ձեր օգտանունն ու գաղտնաբառը պահեք ապահով, գաղտնի տեղում և չտեղեկացնեք որևէ միկին այդ մասին:



## Հիմնական / Գլխավոր Էջը

Գրանցման գործընթացի ավարտից հետո, Դուք կտեղափոխվեք Հիմնական կամ Գլխավոր Էջ:




Այժմ, որպես Մատակարար, օգտագործելով Ձեր հաշիվը, Դուք ունեք ստորև թվարկածը անելու հնարավորությունը՝

- Ներկայացնել Ձեր ժամացուցակները Էլեկտրոնային Ժամացուցակի Համակարգում
- Դիտարկել Վճարման Պատմությունը
- Գրանցվել Ուղղակի Ավանդի համար առցանց
- Ներկայացնել Հիվանդության պատճառով բացակայության հայտն առցանց

**Նշում.** Երբ Դուք գտնվում եք Հիմնական էջում, Դուք կարող եք տեսնել Ձեր բոլոր ստոցողների ցանկը, որոնց համար ծառայություններ եք մատուցում: Եթե Ձեր ստացողը դեռ գրանցված չէ Էլեկտրոնային Ծառայությունների Կայքէջում (ESP-ում) կամ Հեռախոսային ժամացուցակի Համակարգում (TTS-ում), ապա այդ ստացողի անվան տակ Դուք կտեսնեք նշում՝ Ձեզ տեղեկացնելով, որ Ձեր այդ ստացողը պետք է գրանցվի:

Որպես Ստացող, օգտագործելով Ձեր հաշիվը, Դուք ունեք ստորև թվարկածը անելու հնարավորությունը՝

- Վերանայել Ձեր մատակարարի ժամացուցակները էլեկտրոնային եղանակով:
- Հաստատել կամ մերժել Ձեր մատակարարի ժամացուցակները էլեկտրոնային եղանակով:
- Դիտարկել Ձեր մատակարարի ժամացուցակի պատմությունը: